Հավելված 7
ՎՅ-ԳՀԱՊՁԲ- 2019/5 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎՅ-ԳՀԱՊՁԲ- 2019/5-1

ք.Վանաձոր«» 20 թ.

Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՊՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արտակ Եդոյանի, որը գործում է <<Վանաձորի թիվ3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ,,Արֆարմացիա ,,ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ Ալեքսանյան-ի, որըգործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդինմատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսվածդեղեր (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունել ապրանքընվճարելդրահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 419853 /չորս հարյուր տասնինը հազար ութ հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս՝ «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջԷմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Վանաձորիթիվ3 պոլիկլինիկա ՊՓԲԸ	«Արֆարմացիա» ՓԲԸ
ՎանաձորՊարույր Սևակի 49	ք. Երևան, Ռաֆֆու 111
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 220055140267000	Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 06907229	ՀՎՀՀ 02505735
_____Ա. Եդոյան	էլ.փոստ:tender@arpharm.am
/ստորագրություն/	Ա. Հովհաննիսյան
Կ.Տ	_____
	/ստորագրություն/
	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
N ՎՅ-ԳՀԱՊՁԲ- 2019/5-1
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

նախատեսված չափաբաժնի համարը հրավերով	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափի միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման հասցեն	մատակարարման քանակը	մատակարարման ժամկետները
3	33671135/3	Կալցիումիքլորիդ 10% 5մլ	Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ՀՀ	Կալցիումի քլորիդ 10% 5մլ ամպուլաներ լուծույթ ներարկման: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայությունում (տես ծանոթությունը Ֆիրմայի նշումով	Սրվակ	36,76	1837,5	50		50	Մատակարարումնիրակնացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվանից թացքումբայցոչշուտպամանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպքերբընտրվածմասնակիցհամաձայնումէապրանքը մատակարարելավելիկայծամկետում: Մատակարարմանվերջնաժամկետըչիկարողավելինել, քանտվյալտարվադեկտեբերի 15-ը
6	33621700/4	Էգիլոկ100մգ	Էգիս	Մետոպրոլոլ (մետոպրոլոլի տարտրատ) 100մգ դեղահատ: :Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայությունում (տես ծանոթությունը Ֆիրմայի նշումով :	Դեղահատ	30,9	61800	2000		2000	Մատակարարումնիրակնացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվանից թացքումբայցոչշուտպամանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպքերբընտրվածմասնակիցհամաձայնումէապրանքը մատակարարելավելիկայծամկետում: Մատակարարմանվերջնաժամկետըչիկարողավելինել, քանտվյալտարվադեկտե

											բերի 15-ը
12	33691145/3	մագնեզիումիսուլֆատ 250մգ/մլ, 10մլամպուլա	Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ՀՀ	Մագնեզիումիսուլֆատ,լուծույթ ներարկման,250մգ/մլ, 10մլամպուլա: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը Ֆիրմայի նշումով	Սրվակ	31	620	20		20	Մատակարարումնիրակ նացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվա նթացքումբայցոչշուտպա մանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպք , երբընտրվածմասնակիցը համաձայնումէապրանքը մատակարարելավելիկա ճժամկետում: Մատակարարմանվերջն աժամկետըչիկարողավել ինել, քանտվյալտարվադեկտե բերի 15-ը
33	33671130/5	դիմեդրոլ10մգ/մլ, 1մլ	Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ՀՀ	Դիֆենհիդրամին ,դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ , լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլաներ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն, տես ծանոթությունը, Ֆիրմայի նշումով	Սրվակ	21,5	1075	50		50	Մատակարարումնիրակ նացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվա նթացքումբայցոչշուտպա մանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպք , երբընտրվածմասնակիցը համաձայնումէապրանքը մատակարարելավելիկա ճժամկետում: Մատակարարմանվերջն աժամկետըչիկարողավել ինել, քանտվյալտարվադեկտե բերի 15-ը
54	33621640/2	հիդրոկորտիզոն10մգ/գ 10գալյումինե	Արփիմեդ ՀՀ	հիդրոկորտիզոն,հիդրոկորտիզոնի ացետատ, 10մգ/գ 10գալյումինե պարկուճ: Հանձնման պահին պիտանե	Հատ	155	4650	30		30	Մատակարարումնիրակ նացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվա նթացքումբայցոչշուտպա մանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպք ,

				լիության ժամկետի առկայություն, տես ծանոթությունը, Ֆիրմայի նշումով							երբընտրվածմասնակիցը համաձայնումէապրանքը մատակարարելավելիկայ ճժամկետում: Մատակարարմանվերջն աժամկետըչիկարողավել ինել, քանտվյալտարվադեկտե բերի 15-ը
63	33661116/2	լիդոկայինի հիդրոքլորիդ , 20մգ/մլ 2 մլ	Երևանի քիմիադե ղագործա կան ֆիրմա ՀՀ	Լիդոկային ,լիդոկայինի հիդրոքլորիդ , 20մգ/մլ 2 մլ լուծույթ ներարկման, տեղային անզգայացման համար: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն, տես ծանոթությունը: Ֆիրմայի նշումով	սրվակ	24,7	2470	100		100	Մատակարարումնիրակ նացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվաը նթացքումբայցոչշուտպա մանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպքի , երբընտրվածմասնակիցը համաձայնումէապրանքը մատակարարելավելիկայ ճժամկետում: Մատակարարմանվերջն աժամկետըչիկարողավել ինել, քանտվյալտարվադեկտե բերի 15-ը
65	33611360/4	Ակվատերիմ վիտամինD3Մ եղանա	Մեդանա ֆարմա Լեհաստ ան	Խոլեկլցիֆերոլ10մլ(15000ՄՄ/մլ)22հկ Հանձնման պահին պիտանելիութ յան ժամկետի առկայությունմ ,տես ծանոթությունը ,Ֆիրմայի նշումով	Շշիկ	579	347400	600		600	Մատակարարումնիրակ նացվումէպատվիրատուի պահանջիցհետո 5աշխատանքայինօրվաը նթացքումբայցոչշուտպա մանագիրկնքելու 20-րդօրից, բացառությամբայնդեպքի , երբընտրվածմասնակիցը համաձայնումէապրանքը մատակարարելավելիկայ ճժամկետում: Մատակարարմանվերջն աժամկետըչիկարողավել ինել, քանտվյալտարվադեկտե բերի 15-ը

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	Անվանումը ապանքային նշանը	Միավորի գինը	Մատակարարման ենթակա քանակները ըստ եռամսյակների								
				Iեռամսյակ	IIեռամսյակ		IIIեռամսյակ		IVեռամսյակ			
					քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
3	33671135/3	Կալցիումիքլորիդ 10% 5մլ	36,76		20	735,2	20	735,2	10	367,6	50	1837,5
6	***33621700/4***	Էգիլոկ100մգ	30,9		600	18540	800	24640	600	18540	2000	61800
12	***33691145/3***	մագնեզիումիսուլֆատ 250մգ/մլ, 10մլամպուլա	31		10	310			10	310	20	620
33	33671130/5	դիմեդրոլ10մգ/մլ, 1մլ	21,5		20	430	20	430	10	215	50	1075
54	33621640/2	հիդրոկորտիզոն10մգ/գ 10գալյումինե	155		10	1550	10	1550	10	1550	30	4650

63	33661116/2	լիդոկայինի հիդրոքլորիդ , 20մգ/մլ 2 մլ	24,7		40	988	30	741	30	741	100	2470
65	***33611360/4***	***Ակվադետրիմ վիտամինD3Մեղանա***	579		200	115800	200	115800	200	115800	600	347400

*դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

*դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

**Պայմանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-*

ԳՆՈՐԴ

Վանաձորիթիվ3 պոլիկլինիկա ՊՓԲԸ
ՎանաձորՊարույր Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
հհ 220055140267000
ՀՎՀՀ 06907229
_____Ա. Եդոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա» ՓԲԸ
ք. Երևան, Ռաֆֆու 111
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735
Էլ.փոստ:tender@arpharm.am
Ա.Հովհաննիսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
N ՎՅ-ԳՀԱՊՁԲ- 2019/5-1
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
ՀՀդրամ

Ապրանքի							
հրավերովնախատեսվածչափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմացվճարումներընախատեսվումէիրականացնել 2019թ<<Վանաձորիթիվ 3 պոլիկլինիկա>>ՊՓԲԸբյուջետայինմիջոցների հաշվին՝ ըստեռամսյակներիայդթվում				
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IVեռամսյակ	Ընդամենը
3	33671135/3	Կալցիումիքլորիդ 10% 5մլ		735,2	1470,4	18378	1838
6	***33621700/4***	Էգիլոկ100մգ		18540	43180	61800	61800
12	***33691145/3***	մագնեզիումիսուլֆատ 250մգ/մլ, 10մլամպուլա		310	310	620	620
33	33671130/5	դիմեդրոլ10մգ/մլ, 1մլ		430	860	1075	1075

54	33621640/2	հիդրոկորտիզոն10մգ/գ 10գալյումինե		1550	3100	4650	4650
63	33661116/2	լիդոկայինի հիդրոքլորիդ , 20մգ/մլ 2 մլ		988	1729	2470	2470
65	***33611360/4***	***Ակվադետրիմ վիտամինD3Մեղանա***		115800	231600	347400	347400

- Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով

ԳՆՈՐԴ

Վանաձորիթիվ3 պոլիկլինիկա ՊՓԲԸ
ՎանաձորՊարույր Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
հհ 220055140267000
ՀՎՀՀ 06907229
_____Ա. Եդոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա» ՓԲԸ
ք. Երևան, Ռաֆֆու 111
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 163008100220
ՀՎՀՀ 02505735
Էլ.փոստ:tender@arpharm.am
Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.